

## Արձանագրություն թիվ 6

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2020թ հունվարի 29-ին

Օրակարգը՝

1. Ամբիոնների վարիչների հաղորդումը քննաշրջանի ընթացքի վերաբերյալ:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

1.Խորհրդի նախագահ Տ. Վ. Ղուչիկյան.

Ըստ օրակարգի 1-ին հարցը ամբիոնների վարիչների հաղորդումը քննաշրջանի ընթացքի վերաբերյալ:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ՝ Ա.Ի.Մարտիրյան

Քննությունները մեզ մոտ ավարտվել են և արդյունքները հետևյալն են՝ Սննդի անվտանգություն մագիստրատուրայի քննությունները ավարտվել են առաջադիմությունը հիմնականում բարձր է և լուծարք ունի 1 ուսանող: Խնդիրներ կան բակալավրիատի առաջին կուրսեցիների մոտ, որը բացատրվում է տղաների բանակ գորակոչվելու հետ:

Ն.Ա.Դուրգարյան – Օրգանական քիմիայի ամբիոնում քննությունները ընթացել են նորմալ հունով : Խնդիր ունենք 4-րդ կուրսի ուսանողուհի Մերի Բաբայանի հետ: Նա գումարայի ունի 4 լուծարք, որից երկուսը “ԲՄՄ-քիմիա” և “Սինթեզի մեթոդներ” առարկաներից: 3-Ուսանող գտնվում են գործուղման մեջ հետևաբար չեն մասնակցել քննական ընթացքին:

Շ.Ա.Մարգարյան –Ֆիզ. և կոլ. Քիմիա մասնագիտությամբ մագիստրատուրայի 2-րդ կուրսում ունենք 2 գերազանց ուսանող: Քննությունների ընթացքը նորմալ է: Դեռևս չի ավարտվել քննական գործընթացը, 30.01.2020թ-ին վերջին քննություններն են մեր ամբիոնում:

Դեկանի տեղակալ – Ա.Ս.Գալստյան Քննական շրջանում խնդրի են ունեցել առաջին կուրսեցիները “Հայոց լեզու և խոսքի մշակույթ” և “Հայոց պատմություն”

առարկաներից 26-ուսանողներից 13-ը ունեն անբավարար գնահատական կամ չեն ներկայացել: Ներկայացնում ընդհանուր առաջադիմության տեսքը բակալավրիատում՝ Մննդի քիմիա և Քիմիա բաժիններում գերազանց առաջադիմությամբ – 4 ուսանող, բարձր առաջադիմությամբ – 6 ուսանող, միջին առաջադիմությամբ -85 ուսանող , միայն բավարար առաջադիմությամբ -2 ուսանող, անբավարար գնահատական են ստացել -31 ուսանող: Մագիստրատուրայում անբավարար գնահատական ունի միայն մեկ ուսանող:

-Գիտխորհրդի նախագահ Ս.Վ.Ղոչիկյան

-Եզրափակիչ քննությունների ավարտից հետո դուրս բերած գնահատականների պարզ է դառնում որ, բակալավրիատի բաժնից գումարային 31 ուսանող լուծարքներ ունեն, իսկ մագիստրատուրայում միայն մեկ ուսանող::

- Ս.Վ.Ղոչիկյան – Օրակարգի երկրորդ հարցը՝ դասալսումների մասին:

- Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ- Ն.Ա.Դուրգարյան

Դասալսումներ իրականացնում ենք, առավել կարևոր համարում լաբորատոր և գործնական դասերին մասնակցելը՝ քանզի լաբորատորի ժամանակ ակնհայտ է դառնում ուսանողի ինքնուրույնության աստիճանը փորձերի ընթացքում:

- Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ – Շ.Ա.Մարգարյան

Դասալսումներ լինում են ամեն ինչ ընթանում է նորմալ հունով:

- Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ՝ Ա.Ի.Մարտիրյան

Ամբիոնում ունենք մի քանի երիտասարդ դասախոսներ, նրանց դասերն անընդհատ ուշադրության կենտրոնում են: Մշակել ենք նաև նոր մոտեցում, այն է երիտասարդ դասախոսները մասնակցում են փորձառու դասախոսների դասերին:

3.Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր – Ս.Վ.Ղոչիկյան

Ընթացիկ հարցերի մեջ ունենք մի քանի հարց:

Ա) Բազային ֆինանսավորմամբ Գ/Հ լաբորատորիաների 2021 թ-ի հայտերի քննարկման և երաշխավորման հարցը:

Գիտխորհուրդ է ներկայացվել “Օրգանական քիմիա”, Ֆիզիկական քիմիա” և “Անօրգանական քիմիա” Գ/Հ/լաբորատորիաների հայտերը: Անհրաժեշտ

գործընթացը փաստաթղթերի և գիտական աշխատանքների ներկայացման համար կատարվել է նորմալ: Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը, որոշեց երաշխավորել բազային Գ/Հ լաբորատորիաների հայտերի ներկայացման գործընթացը հետագա ֆինանսավորման համար:

Բ) Օրգանակա քիմիայի ամբիոնի ասիստենտ Ա.Ս.Գալստյանը ներկայացրել էր ուսումնամեթոդական ձեռնարկ, որն ենթարկվել էր ներամբիոնային գրախոսման: Աշխատանքը գտնվում էր գրախոսման երկրորդ փուլում՝Նարեկ՝ Գ/Հ ՓԲԸ կազմակերպությունում (Կարծիքը կցվում է):

Լսեցին – Օրգանական քիմիայի ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Ա.Ս.Գալստյանի «Հավելանյութերը սննդամթերքի արտադրություններում» ուսումնական ձեռնարկի հրատարակման հարցը:

Խորհրդի նախագահ, ք.գ.դ., պրոֆեսոր Տ.Վ. Ղոչիկյանը նշեց, որ Ա.Ս.Գալստյանի «Հավելանյութերը սննդամթերքի արտադրություններում» ուսումնական ձեռնարկը ենթարկվել է գրախոսման ամբիոնում և տրվել արտաքին գրախոսման՝Նարեկ՝ գիտահետազոտական ՓԲԸ-ում: Գրախոսներ՝ օրգանական քիմիայի ամբիոնի պրոֆեսոր Գ.Գ.Թոքմաջյանը, Նարեկ՝ գիտահետազոտական ՓԲԸ-ում կազմված հանձնախումբը (նախագահ Ա.Դայան) կարևորելով ձեռնարկի արժեքը և մայրենի լեզվով ձեռնարկների հրատարակման անհրաժեշտությունը այն երաշխավորել են տպագրության:

Որոշեցին – Հաշվի առնելով օրգանական քիմիայի ամբիոնի միջնորդությունը և գրախոսների դրական կարծիքը խորհուրդը միաձայն որոշեց ասիստենտ ք.գ.թ. Ա.Ս.Գալստյանի «Հավելանյութերը սննդամթերքի արտադրություններում» ուսումնական ձեռնարկը թույլատրել տպագրության(100 օրինակ տպաքանակով):

Գ) Լսեցին. – ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի, Էկոլոգիական անվտանգության կենտրոնից «Բիոտայի ադոտովածությունը ծանր մետաղներով որպես վտանգ բույսերի կենսաբազմազանության և դրանցում կենսաակտիվ միացությունների պահպանմանը» թեմայով ՀՀ ԿԳՄՄԼ գիտության կոմիտեի և Գիտական հետազոտությունների աջակցության եվրասիական ասոցիացիայի հետ համատեղ անցկացվող Գիտական հետազոտությունների մրցույթին (թեմատիկ) ֆինանսավորում ստանալու համար հայտը, թեմայի ղեկավար՝ ք.գ.դ., պրոֆեսոր Փիրույան Գևորգ Պետրոսի:

Գիտական խորհուրդ որոշեց երաշխավորել թեմայի ֆինանսավորումը

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղռչիկյան

Գիտ.խորհրդի

քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան